Ծրագրի անվանումը	Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 471 գծամետր ճանապարհի ասֆալտապատում
Մարզ	Գեղարքունիք
Համայնքը /համայնքները	Վարդենիս
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	175կմ, 75կմ
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	Վարդենիս՝ 39162 Սոթք բնակավայր՝ 1039
Սահմանամերձ համայնք/բնակավայր	Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը սահմանամերձ է
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	Բարձր լեռնային
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը, դրա իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, գործողությունները և շահառուներ	Վարդենիս համայնքի զարգացման նախադրյալներից է համայնքի արտաքին տեսքի բարելավումը, բնակիչների համար բարեկեցության ապահովումը, կենսապայմանների բարելավումը, բնակիչների կյանքի որակի բարձրացումը: Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրը սահմանամերձ է, ծովի մակերևույթից գտնվում է 2020 մետր բարձրության վրա: Բնակչության հիմնակկան զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Մարդիկ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, կերային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ: Բնակավայրից ոչ հեռու է գտնվում Սոթքի ոսկու հանքավայրը: Սոթքը «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի ազդակիր բնակավայր է: Գյուղը ունի դպրոց, մանկապարտեզ, նախակրթարան, ինչպես նաև գործում է բուժկետ, վարչական շենք: Սոթք բնակավայրի կենտրոնական փողոցը հողային է, ողջ տարվա ընթացքում ցեխապատ է, դժվարություններ է առաջացնում ինչպես երթևեկության, այնպես էլ հետնիոտների համար: Այս փողոցին են հարում Սոթքի հանրակրթական դպրոցը, մանկապարտեզը, վարչական շենքը: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել 471 գծամետր երկարությամբ, 6 մետր լայնությամբ ճանապարհը: Ծրագրի ուղղակի շահառուներն են համարվում Սոթք բնակավայրի 1039 բնակիչները, դպրոցականները,

	մանկապարտեզ հաճախող երեխաները, մանկավարժները: Նախագծանախահաշվային փաստաթղթերը դեռևս առկա չեն, բայց նախնական ուսումնասիրությունների համաձայն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 49.433.592 ՀՀ դրամ /կից ներկայացված է իրականացվելիք աշխատանքերի ֆինանսական նախնական գնահատականները, հաշվարկները/: Ծրագիրը ներկայացված է համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագրում, որի հաստատման ընթացքում անցել է հանրային քննարկում: Ծրագրը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 1-ի N 1370-Ն որոշմամբ սահմանված համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված 6)քաղաքաշինություն և 8)տրանսպորտ և ճանապարհաշինություն միջոցառումներին (ուղղություններին):
Ծրագրի կատարման ժամկետները	**10.05.2024-31.12.2024** Ծրագրի ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ օգոստոսի 4-ի N 1198-Ն որոշման Հավելված N 1-ի 2-րդ կետով սահմանված ժամկետներում կներկայացվի ծրագրի տարեկան հաշվետվությունը:
Ծրագրի հնարավոր ռիսկերը	Վարդենիս համայնքը ունի նմանատիպ ծրագրեր իրականացնելու փորձ, քանի որ վերջին տարիներին սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել և իրականացվում են համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Վերոնշյալ ծրագրի ռիսկ կարող են լինել ֆորսմաժորային իրավիճակները, երբ անհաղթահարելի ուժի ազդեցությամբ հնարավոր չի լինի իրականացնել ծրագիրը:

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության Վարդենիս համայնքի մասհանումների ծախսման 2024 թվականի ծրագրի ֆինանսական գնահատականները

Հ/Հ	Միջոցառման անվանում	Ծրագրի արժեքը, ընդամենը/հազ. դրամ/	Պետական բյուջե /հազ.դրամ/
1	*Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 471 գծամետր երկարությամբ փողոցի ասֆալտապատում*	*49.433.592 ՀՀ դրամ*	*49.433.592 ՀՀ դրամ*
1.1	Շինարարական աշխատանք	47.866.800 ՀՀ դրամ	47.866.800 ՀՀ դրամ
1.2	Նախագծանախահաշվային փաստաթղթերի և փորձաքննության ձեռքբերում	990.000 ՀՀ դրամ	990.000 ՀՀ դրամ
1.3	Տեխնիկական հսկողություն	300.000 ՀՀ դրամ	300.000 ՀՀ դրամ
1.4	Հեղինակային հսկողություն	276.792 ՀՀ դրամ	276.792 ՀՀ դրամ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**